Հաստատում եմ
դպրոցի տնօրեն՝
Թ.Սարգսյան

Digitally signed by SARGSYAN TAMARA 5801840567
Date: 2023.09.05 21:46:56 AMT

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՂԱԶԱՐԱՎԱՆԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԼԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՕԳՈՍՏՈՍԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
2023 Թ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

2022-23 ուսումնական տարում Արագածոտնի մարզի Ղազարավանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, իր աշխատանքների հիմքում դնելով 1999թ. ապրիլի 14-ի ԱԺ կողմից ընդունած «Կրթության մասին» և 2009թ. հուլիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքները, Հանրակրթության պետական չափորոշիչները՝ ընդունված ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ին, ԿԳՆ-ի 2010թ. 22.12. 0544. 0566. 0655.21.03.2018թ. որոշումով ստացել է լիցենզիա, ավագ նախադպրոցական, տարրական, հիմնական և ավագ դպրոցական հանրակրթական ծրագրեր իրանակացնելու իրավունք: Հաշվի առնելով 2013թ. 30. Հ1001 Ն հրամանը «Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը հաստատելու մասին», ելնելով ՀՀ կառավարության 2010թ.-ի սեպտեմբերի 3-ի N 1334 Ն որոշումից, ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգից՝ 2022թ. օգոստոսի 23-ին դպրոցի տնօրենի նախագահությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ դպրոցի 2021-22 ուստարվա ներքին գնահատումը սահմանված կարգի համաձայն կազմակերպելու և անցկացնելու համար: Հաստատվել են գործողությունների ծրագիրը, մեթոդները և ժամանակացույցը:

2022-23 ուստարում դպրոց են հաճախել 65 աշակերտներ՝ 12 դասարանով, նախակրթարանի 1 խումբ՝ 5 երեխաներով (5 տարեկան): Աշխատակիցների թիվը եղել է 28 (20 մանկավարժ, 1 վարչական և 6 ուսումնաօժանդակ աշխատողներ): ՈՒսումնական տարվա ընթացքում դպրոցից տեղափոխվել է 0 աշակերտ, դպրոց է եկել 5 աշակերտ: Ուսումնական տարվա վերջում աշակերտների թիվը կազմել է 70, գերազանցիկ են եղել աշակերտներ, հարվածային՝ 32: Բացակայությունների թիվը կազմել է 396 ժամ: Ուսման առաջադիմությունը կազմել է 100%, իսկ ուսման որակը՝ 36%:

Համաձայն 2022թ. մայիսի 18-ի 07-Ն 2022-23 ուսումնական տարում միջնակարգ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտական և ուսումնական պարապմունքներից բացակայություն ունեցող սովորողների հետագա ուսումնառության կարգը հաստատելու մասին հրամանի՝ 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման հունիսի 22-ից հուլիսի 3-ը, 9-րդ դասարանի ավարտական քննություններ հունիսի 21-ից հուլիսի 5-ը, կենտրոնացված քննություն հունիսի 30-ին, 12-րդ դասարանի պետական ավարտական քննություններ հունիսի 21-ից հուլիսի 5-ը: 9-րդ դասարանում սովորող 4 աշակերտները ստացել են հիմնական կրթության վկայականներ 1-ը վերաքննության արդյունքուն, իսկ 12-րդ դասարանի 4 աշակերտներ ստացել են ավարտական ատեստատներ:

Ուսումնական տարվա ընթացքում ժամանակին գումարվել են մանկավարժական խորհրդի նիստերը, որոնց ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

- 2022-23 ուսումնական տարվա դպրոցի տնօրենի հաշվետվությունը մանկավարժական կոլեկտիվի կատարած աշխատանքների մասին և նոր՝ 2023-24 ուստարվա խնդիրները:
- I և II կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում, ուսպլանի և դասացուցակի հաստատում:
- 2022-23 ուսումնական տարվա ներքին գնահատման չափանիշների հաշվետվություն:
- 2022-23 ուստարվա մանկավարժական խորհրդի կազմի հաստատում:
- 2022-23 ուստարվա դասվար-դասղեկների, մասնախմբերի նախագահների հաստատում, առարկայական խմբակների դպրոցական բաղադրիչի, առարկայական խմբակների բաշխում:
- 2022-23 ուստարվա ժամաքանակի, համադպրոցական ծրագրի քննարկում և հաստատում:

- 2022-23 ուստարվա դպրոցի ռեժիմի հաստատում:

- Անցում համընդհանուր ներառական կրթության:
- Ներդպրոցական վերահսկողություն:
- Առարկայական օլիմպիադաների նախապատրաստում:
- Դպրոցի բյուջեի քննարկում:
- ՀՀ Կառավարության կողմից սոցիալապես անապահով երեխաների դասագրքերի վարձավճարները դրամով 26000 դրամով զեղչելու մասին:
- Աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացում:
- 2022-23 ուստարվա մասնախմբերի հաշվետվություն (առաջին և երկրորդ կիսամյակ)
- 2022-23 ուստարվա ամփոփում (1-ին և 2-րդ կիսամյակ):
- 2022-23 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի ուսպլանի հաստատում:
- 1-11-րդ դասարանների աշակերտներին փոխադրելու մասին:
- 9-րդ դասարանի աշակերտներին հիմնական կրթության վկայականներ տալու և 12-րդ դասարանի աշակերտներին ավարտական ատեստատներ տալու մասին:
- 2022-23 ուստարում դասվար-դասղեկների, մասնախմբի ղեկավարների, ԴԱԿ-ի, գրադարանավարների, , խմբակների ղեկավարների հաշվետվություն:
- 2022-23 ուսումանական տարվա նախնական դասաբաշխում:

Ընդհանուր առմամբ գումարվել է մանկավարժական խորհրդի 6 նիստ, կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց կենսագործումն ընթացքի մեջ է:

Դպրոցում գործել է 2 մեթոդական միավորում, որոնք ղեկավարել են Ա.Սարգսյանը, և Ս.Գրիգորյանը: Դպրոցի ուսումնադաստիարակչական պրոցեսում կարևոր տեղ ունեն մ/մ աշխատանքները: Նրանց և ուսուցիչների փոխադարձ ծրագրված և համատեղ աշխատանքի հիման վրա կարելի է հասնել միայն լավագույն արդյունքի: Մ/Մ նախագահները մեծ օժանդակություն և պահանջկոտություն պետք է դրսևորեն երիտասարդ մանկավարժներ նկատմամբ՝ նրանց մոտ հաճախակի կազմակերպելով դասալսումներ:

2010 թվականից դպրոցում գործում է նախակրթարան (դաստիարակ՝ Ա.Հովսեփյան): Այն զգալիորեն օգնում է դասվարին. առաջին դասարան ընդունվող աշակերտներն արդեն նախնական գիտելիքներ ստացած և հոգեբանորեն պատրաստ են մուտք գործում դպրոց:

2022-23 ուտարում ՄԱԿ «Պարենի համաշխարհային ծրագրով» 1-4-րդ դասարանների 28 երեխաներ ստացել են իրենց հասանելի սնունդի փաթեթները:

Դպրոցի զարգացման կարևոր ուղղություններից է մանկավարժական համակազմի որակական բարելավումը: Մանկավարժներ Ա.Սարգսյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Երվանդյանը, Ա.Ամիրխանյանը, Ա.Մարգարյանը, Մ.Սարգսյանը մասնակցել են ԿԳՄՄՆ ԿՏԱԿ-ի, ԾԻԳ-ի կազմակերպած ՏՀՏ, հեռավար և ֆինանսական կրթության ներդրման դասընթացներին և վերապատրաստումներին, ստացել են հավաստագրեր:

Պարտադիր ատեստավորման է մասնակցել 4/չորս/ ուսուցիչ և լավագույն արցունքներով ավարտել այն:

2022-23 ուստարում դպրոցում գործող 3 մասնախմբերը հիմնականում կատարել են իրենց ծրագրով նախատեսված աշխատանքները (բացառությամբ մարտ-մայիս ամիսների) կազմակերպվել են առարկայական միամսյակներ և բաց դասեր: Մարտ-մայիս ամիսներին նախատեսված միջոցառումներն արմատապես տարբերվեցին նախորդ տարիների կատարածներից. արտակարգ դրությունը փոխեց նաև միջոցառումների անցկացման ձևաչափը: Սակայն պետք է նշել, որ կարելի է դասալսումներն ավելի հաճախակի դարձնել, նոր մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսին ներդնել, ինչպես նաև մատենավարությունը իրականացնել օրենքով սահմանված կարգով: 2018թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Պարտադիր տասներկուամյա կրթությունը», որի հիմքում դրված են սովորողների կողմնորոշման խնդիրները:

2022-23 ուսումնական տարում բավականին աշխատանքներ են կատարվել աշակերտների դաստիարակության ուղղությամբ: Դպրոցում գործող դասղեկները, աշակերտական և ծնողական խորհուրդներն այն կարևոր օղակներն են, որոնց միջոցով իրականացվում են երեխաների դաստիարակչական խնդիրները:

2022-23 ուստարվա սեպտեմբերին նշվել են Գիտելիքի և դպրության օրը: Շարունակվեց նաև Հովի. Թումանյանի հոբելյանին նվիրված միջոցառումների շարքը. աշակերտական խորհուրդը նախաձեռնեց ֆլեշ-մոբ. իրար մարտահրավեր նետելով՝ ասմուքում էին մեծ լոռեցու՝ իրենց սիրած գործերը:

Աշտարակի ոտիկանության անչափահասների բաժնի աշխատակիցները բռնության և նրա տեսակների մասին հանդիպում-զրույց անցկացրին դպրոցում, իսկ աշակերտական խորհուրդը դիտեց տեսանյութ՝ «Հասակակիցների միջև բռնության նվազեցման փորձ» խորագրով:

Դեկտեմբերի 6-ին մոմավառությամբ նշվեց երկրաշարժի զոհերի հիշատակը, «Աղետներին դիմակայության օր» խորագրով համապետական միջոցառումների շրջանակում կազմակերպվեց շենքից արագ հեռացում:

Այսօր առավել կարևոր է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

Փետրվարի 8-ին դպրոցում նշվեց սիրո բարեխոս Սուրբ Սարգսի տոնը՝ երիտասարդների օրհնության օրը: Գեղեցիկ ստեղծագործությունների ընթերցմամբ ու երգերի ունկդրումով նշվեց Վահան Տերյանի ծննդյան 136-ամյակը: Փետրվարի 12-ին՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան օրը, աշակերտները դիտեցին «Աշնան արև» ֆիլմը:

Մեծ լոռեցու՝ հանճարեղ Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, Հայաստանում նշվում է որպես գիրք նվիրելու օր: Աշակերտները դպրոցին, ուսուցիչներին, միմյանց գրքեր նվիրեցին: Այս տարի գրքի տոնը նշվեց համայնքի գրադարանում: Դպրոցի և համայնքի գրադարանավարները կազմակերպել էին համատեղ միջոցառում:

Փետրվարի 21-ին՝ Մայրենիի օրը, անցկացվեց խաղ-վիկտորինա 7-12-րդ դասարանների աշակերտների միջև. այն աշակերտների լեզվական գիտելիքներն վերստուգելու, ամրապնդելու և լեզուն արժևորելու տեսանկյունից շատ կարևոր էր, ուսուցողական:

Փետրվարի 28-ին կազմակերպվեց մոմավառություն, հարգվեց Սումգայիթի զոհերի հիշատակը:

Փետրվարի 29-ին՝ Քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա նախօրեին, կազմակերպվեց տարհանում, բացատրվեց, թե որոնք են արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ քայլերը:

Նախորդ ուսումնական տարում բացեցինք համակարգչային սենյակը համալրելով ևս 2 համակարգիչներով:

Դաստիարակչական աշխատանքներում կարևոր է դասղեկի դերը: Նա պատասխանատու է յուրաքանչյուր աշակերտի ուսման, դաստիարակության, ծնողների հետ տարվող աշխատանքների, մատենավարության համար: Դեռևս թերություններ են նկատվում էլեկտրոնային մատյաններում:

Դպրոցի աշխատակիցները օգտվում են ՀՀ կառավարության կողմից հաստատված սոցիալական փաթեթից, որի արդյունքում մանկավարժներն օգտվում են բժշկական անվճար ծառայություններից, ուսման վարձավճարների փոխհատուցումից, հանգստի կազմակերպումից:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ կարևոր դեր ունի դպրոցի ծնողական խորհուրդը: Ուսումնական տարվա ընթացքում ժամանակին գումարվել են ծնողական խորհրդի նիստերը: Դպրոցի և դասարանական ծնողական խորհուրդները ակտիվորեն մասնակցում են դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծմանը:

Ծնողական խորհրդի օգնությամբ դպրոցում լուծվում են բազմաթիվ տնտեսական խնդիրներ: 2010թ.-ից ԿԳՆ որոշմամբ դպրոցը ծնողների հետ անցել է պայմանագրային համագործակցության: Պայմանագրերում ձևակերպված են դպրոցի և ծնողի իրավունքներն ու պարտականությունները:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ կարևոր տեղ ունի դպրոցի գրադարանավարի աշխատանքը, նրա միջոցով իրականացվել է վարձույթով դասագրքերի բաշխումը: Հավաքագրվել և ԴՇՀ-ին է մուծվել 277000 դրամ, պետության կողմից տրամադրված 26000դրամ գումարով զեղչվել է դպրոցի 5 անապահով աշակերտների դասագիրք:

Գրադարանավարի կողմից կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված հայ մեծ գրողների հոբելյաններին: Առարկայական մեթոդական միավորումները պետք աջակցեն գրադարանավարի աշխատանքներին՝ այն դիտարկելով դպրոցի ուսումնադաստիարակչական պրոցեսի կարևոր օղակ:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում իր կարևոր տեղն ունի դպրոցի ֆիլմադարանը:

Մեր օրերում, երբ երեխաները քիչ են կարդում, ուսումնական ֆիլմերի դիտումը կարող է դառնալ հայ գրողների ստեղծագործություններին ծանոթացնելու կարևոր միջոց:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը մեծ ուշադրություն պետք է դարձնի ՀՀ պետական խորհրդանիշների ուսուցմանը, հասարակագիտության և պատմության ուսուցիչները դասապրոցեսին մեծ տեղ պետք է հատկացնեն նրանց ստեղծման պատմությանը, անդրադառնան մեր պետության հերոսական էջերին:

Ամուր է կապը դպրոցի և համայնքապետարանի միջև: Համայնքապետը և ավագանու անդամները միշտ մասնակցում են դպրոցում կազմակերպված համադպրոցական միջոցառումներին: Տարեմուտին նախակրթարանի և 1-4-րդ դասարանի երեխաներին նվերներ է տրամադրում, ուսուցիչի օրը և Կանանց տոնին շնորհավորում մանկավարժական կոլեկտիվին:

Դպրոցում սովորում են 7 եզդի երեխաներ, որոնցից շատերը նաև ուսման առաջավորներ են:

Դպրոցի ուսումնադաստիրակչական աշխատանքների մեջ իր կարևոր տեղն ունի դպրոցի ֆինանսատնտեսական բաժինը:

2022-23 ուստարվում հաստատվել է միասնական կառավարման խորհրդի նոր կազմը՝

1. Պետրոսյան Վարդան (խորհրդի նախագահ)
2. Ճորկնցյան Նարինե /համայնքի ներկայացուցիչ/
3. Գրիգորյան Սոնիկ /մանկավարժ/
4. Զաքարյան Լուսինե /մանկավարժ/
5. Գյոզալյան Լիլիթ (քարտուղար)
6. Կալեյան Աննա /ծնող/
7. Գալստյան Թավրիզ /ծնող/

Գումարվել է 6 նիստ, լսվել են բազմաթիվ հարցեր: Խորհուրդը եռամսյակը մեկ քննարկում է դպրոցի ֆինանսական վիճակը, շտկումներ կատարում դպրոցի բյուջեում:

Բարեհաջող անցկացվեցին 2022-23թթ. ձմեռային ջեռուցման աշխատանքները: Դպրոցն ապահովված է մշտական ջրով: 2022-23 ուսումնական տարում սովորող-ուսուցիչ

հարաբերակցությունը կազմել է 1:3, սովորող սպասարկող անձնակազմ հարաբերակցությունը՝ 10:6, դասարանների միջին խտությունը՝ 5 աշակերտ, որը ցածր ցուցանիշ է, մեկ սովորողի հաշվով հաստատության նախահաշիվը՝ 241.153 դրամ, ուսուցչի միջին աշխատավարձը՝ 86,328դրամ, վարչական աշխատողների միջին աշխատավարձը՝ 211648 դրամ, սպասարկող կազմի միջին աշխատավարձը՝ 94.054 դրամ, կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը՝ 1%: 2023թ. հունվարին՝ դպրոցի բյուջեն կազմել է 27.691.3դրամ:

Սանիտարական վիճակը դպրոցում գտնվում է բավարար հիմքերի վրա: Դպրոցի սպասարկող անձնակազմը բարեխղճորեն է կատարում իր պարտականությունները: 2021-2022ուստարում աշակերտական և մանկավարժական ողջ կազմը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց համապետական շաբաթօրյակներին: 2022-23 ուսումական տարում ևս այդ միջոցառումները կկրեն շարունակական բնույթ:

Սակայն դեռևս իր բարձրության վրա չի գտնվում ներդպրոցական վերահսկողությունը: Ելնելով վերոգրյալից՝ նոր ուսումնական տարում դպրոցը կփորձի շտկել բոլոր թերությունները և նոր շունչ հաղորդել ուսումնական, դաստիարակչական ողջ գործընթացին:Դպրոցի մանկավարժական կոլեկտիվն իր առջև խնդիր է դնում.

1.Իրականացնել «Կրթության և Հանրակրթության մասին» ՀՀ օրենքները:
2.Հիմք ընդունել ՀՀ կառավարության և ԿԳՄՄՆ կողմից ընդունված «Հանրակրթության պետական չափորոշիչների» մասին որոշումները:
3.Դպրոցում գործող ուսումնադաստիարակչական բոլոր օղակների աշխատանքները նպատակաուղղել սովորողների ուսման որակի բարձրացմանը, ներդպրոցական կանոնների վերահսկմանը, հիգիենայի կանոնների պահպանմանը, մեր հայրենիքի համար արժանի քաղաքացիների դաստիարակմանը:
5.Դպրոցի տնօրինության ուշադրության կենտրոնում պահել դպրոցի 2022-26թթ. զարգացման ծրագրով առաջադրված խնդիրները:
6.Մանկավարժական կոլեկտիվի կողմից բարձր մակարդակով կազմակերպել ԿԳՄՄՆ կողմից ներդրված դպրոցի կառավարման նոր համակարգի աշխատանքները:
8.2023-24 ուսումնական տարում կատարելագործել դպրոցի զարգացման դաստիարակչական համակարգը.

- կրթադաստիարակչական միջավայրի ստեղծում,
- ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում,
- իրավագիտակցության բարձրացում,
- դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրերի իրականացում, իրավապահ մարմինների հետ համագործակցում:

9. 2023-24 ուսումնական տարում դպրոցում շարունակել հակաբուլլինգային ծրագիրը, որիսպասվող արդյունքներն են.

- սովորողների իրավունքների պաշտպանության և բողոքարկման մեխանիզմի ներդրում,
- իրավահավասարության ձևավորում,
- սովորողների միջև կոնֆլիկտների նվազեցում,
- բռնության բոլոր ձևերի դեմ համարժեք արձագանքում,սովորողների մեջ սեփական իրավունքների և պարտականությունների գիտակցության մակարդակի բարձրացում:

10. Երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով համագործակցել ՀՀ ՊՆ 60925 զորամասի հետ՝ համատեղ իրականացնելով մի շարք միջոցառումներ:

11. Հարստացնել դպրոցի նյութատեխնիկական բազան:

1-ԻՆ ԲԱԺԻՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1.ՀՀ Սահմանադրության 39 հոդվածում, ինչպես նաև «Կրթության մասին օրենքում» նշված է, որ միջին դպրոցը տարրական կրթության հիմքի վրա ապահովում է հիմնական կրթական ծրագրի իրականացում, սովորողների անձի ձևավորում ու կայացում, բարենպաստ պայմաններ է ստեղծում սոցիալական ինքնահաստատմանը նպաստող ընդունակությունների, նախասիրությունների և հակումների զարգացման համար: 2018թ միջնակարգ կրթությունը պարտադիր է և ավարտվում է միջնակարգ կրթության որակավորմամբ:

2. ՀՀ «Հանրակրթության մասին օրենքի» իրականացում:

3.Ավագ դպրոցը ավարտում է սովորողը՝ հանձնելով պետական քննություններ, ստանում է հասունության ատեստատ:

4.2009 թվականին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվեց «Հանրակրթության մասին օրենքը», որի իրականացմանը ձեռնամուխ է եղել դպրոցի մանկավարժական կոլեկտիվը:

5.2012թ հուլիսի 28-ի h 1088Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից ընդունված «Հանրակրթության պետական չափորոշիչները» դպրոցի մանկավարժական կոլեկտիվի համար դարձել է ուղեցույց:

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	Կատարել գյուղի տարածքի 6-18 տարեկան պատանիների հաշվառում և նրանց ներգրավել պարտադիր ուսուցման մեջ:	2023 հուլիս-օգոստոս	տնօրենի դասվար	
2.	Խիստ վերահսկողություն սահմանել ինչպես աշակերտների, այնպես էլ մանկավարժների անհարգելի բացակայությունների նկատմամբ:	տարվա ընթացքում	տնօրեն, ԴԱԿ, դասղեկ	
3.	Մանկավարժական կոլեկտիվի ուշադրության կենտրոնում պահել անապահով ընտանիքների երեխաների հետ տարվող աշխատանքները:	տարվա ընթացքում	տնօրեն, ԴԱԿ, դասղեկ	
4.	Պարտադիր ուսուցման իրականացմանը մասնակից դարձնել դպրոցի կառավարման խորհրդին, ԾԽ և ԱԽ և ավագանու անդամներին:	տարվա ընթացքում	տնօրեն, ԴԱԿ, դասղեկ	

5.	2023-24 ուստարում վերաներոգելդպրոցի հանդիսությունների դահլիճը:	սեպտեմբեր,հոկտեմբեր, նոյեմբեր	տնօրեն, դաստիարակ	

2-ՐԴ ԲԱԺԻՆ

Աշխատանք մանկավարժական կադրերի հետ որակավորման բարձրացման ուղղությամբ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	Հաստատել դասղեկ-դասվարներին, առարկայական մ/մ. նախագահներին, խմբակի ղեկավարներին:	28.08.2023թ.	տնօրեն,	
2.	Անցկացնել դասղեկ-դասվարների և մ/մ նախագահների սեմինար	11.09.2022թ	տնօրեն,	
3.	ՈՒսումնական տարվա ընթացքում իրականացնել «Հանրակրթության չափորոշիչները», «12-ամյա կրթության մասին» օրենքները:	տարվա ընթացքում	տնօրեն,	
4.	2023-24 ուստարվա ընթացքում կազմակերպել դասալսումներ հետևյալ նորմերով. 1. տնօրեն՝ շաբ. 4 ժամ 2. ԴԱԿ՝ ժամ 3 մ/մ նախագահ՝ 3 ժամ	տարվա ընթացքում	տնօրեն,	
5.	ՈՒշադրության կենտրոնում պահել երիտասարդ և սկսնակ մանկավարժների հետ տարվող աշխատանքներին	տարվա ընթացքում	տնօրեն, ԴԱԿ մ/մ	

3-ՐԴ ԲԱԺԻՆ

Մանկավարժական խորհրդի գործունեություն

1-ին նիստ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	2022-23 ուստարվա դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կատարած աշխատանքների հաշվետվությունը և նոր 2023-24 ուստարվա խնդիրները:	08.09.2020	տնօրեն	
2.	2022-23 ուստարվա ներքին գնահատման չափանիշների հաշվետվությունը:		տնօրեն	
3.	2023-24 ուստարվա դպրոցի ուսպլանի քննարկում և հաստատում:		տնօրեն	
4.	2023-24 ուստարվա դպրոցի մանկավարժական խորհրդի կազմի հաստատում:		տնօրեն	
5.	2023-24 ուստարվա դասարանների դասղեկ-դասվարների հաստատում:		տնօրեն,	
6.	2023 -24 ուստարվա առարկայական մ/մ նախագահների հաստատում:		տնօրեն,	
7.	2023-24 ուստարվա առարկայական խմբակների ղեկավարների հաստատում:		տնօրեն,	
8.	2023-24 ուստարվա դպրոցական բաղադրիչ ժամաքանակի հաստատում:		տնօրեն,	
9.	2023-24 ուստարվա համադպրոցական ծրագրի քննարկում և հաստատում:		տնօրեն,	
10.	2023-24 ուստարվա դպրոցի դասացուցակի հաստատում:		տնօրեն,	
11.	2023-24 ուստարում 2-րդ, 5-րդ, և 7-րդ դաս. նոր չափորոշչով կրթությունն իրականացնել /քննքրկում/:		տնօրեն, .	
12.	2023-24 ուստարվա դպրոցի ռեժիմի հաստատում:		տնօրեն,	
13.	2023-24 ուստարվա տարիֆիկացիայի քննարկում:		տնօրեն	

2-րդ նիստ

1.	2023-24 ուստարվա առարկայական չափորոշիչների նախագծի քննարկում:	25.10.20	տնօրեն,	
2.	Սոցիալապես անապահով երեխաների դասագրքերի վարձավճարների զեղչում:		տնօրեն	

3.	Կազմակերպչական հարցեր		տնօրեն	

3-րդ նիստ

1.	«Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքը 2-12-րդ դասարաններում:	2023 դեկտեմբերի	տնօրեն, դասվարներ, Լ.Վարդանյան Զ.Սիմոնյան, Լ.Զաքարյան Ա. Մարգարյան Ա.Ամիրխանյան	
2.	2023-24 ուստարվա առաջին կիսամյակի դպրոցի ուսման առաջադիմության ամփոփումը:			
3.	12-րդ դասարանի «Ֆիզկուլտուրա» առարկայի ստուգարքի հաշվետվություն:			
4.	2023-24 ուստարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում:			

4-րդ նիստ

1.	«Հայ ժողովրդի պատմություն» առարկայի դրվածքը դպրոցում 6-12-րդ դասարաններում:	2024թ. մարտ	Ա. Սարգսյան, Կ. Աբրահամյան Ա.Երվանդյան,	

5-րդ նիստ

1.	ԿԳՄՄՆ հրահանգի մասսայականացումը, 2023-24 ուստարում 1-11-րդ դաս. ամփոփելու, 4-րդ դասարանի աշակերտների գիտ. ստուգման, 9-րդ և 12-րդ դասարանի ավարտական քննությունների վերաբերյալ:	2024թ մայիս	տնօրեն,	

6-րդ նիստ

1.	1-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու ԿԳՄՄՆ հրամանը 4-րդ, 9-րդ, 12-րդ դասարանների աշակերտների գիտելիքների ստուգմանը, որակավորման և պետական քննություններին թույլատրելու հարցը: 1-12-րդ դասարանների դասվարդասղեկների հաշվետվությունը:	2024թ մայիս	տնօրեն	

7-րդ նիստ

1.	4-րդ և 9-րդ, 12-րդ դասարանների աշակերտների գիտելիքների ստուգման, որակավորման և պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփումը:	2024 հունիս	տնօրեն	

4-ՐԴ ԲԱԺԻՆ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	Կատարել դասաբաշխում, մանկավարժներին ապահովել ծրագրերով և մեթոդական գրականությամբ:	հունիս - օգոստոս-2024	տնօրեն	
2.	Դասավանդվող առարկաների որակը բարելավելու նպատակով հարստացնել դպրոցի նյութա-տեխնիկական բազան, ԿԳՄՍՆ «ԿՏԱԿ» կազմակերպության միջոցով դպրոցում ստեղծված համակարգչային կաբինետը դարձնել դասի որակի բարձրացման կարևոր կենտրոն:	տարվա ընթացքում	տնօրեն	
3 .	Դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դասապրոցեսին օգտագործել դիդակտիկ պարագաներ, տեխնիկական միջոցներ, տեսաֆիլմեր և աուդիոձայնագրություններ:	տարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահ	
4.	Աշակերտներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով:	օգոստոս սեպտեմբեր	գրադ. վարիչ	
5.	Աշակերտների գիտելիքների որակը ստուգելու նպատակով կատարել բովանդակային դասալսումներ, արդյունքները քննարկել մ/մ և մանկխորհի նիստում:	տարվա ընթացքում	տնօրեն	

6.	Դպրոցում կազմակերպել առարկայական միամսյակներ. 1.հ.լեզու և գրականութ.,պատմութ., 2.մաթեմատիկա և բնագիտություն 3.դասվարական, 4.օտար լեզուներ, 5.ՆԶՊ, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, կերպարվեստ, երաժշտություն	2023 հոկտեմբեր նոյեմբեր, դեկտեմբեր 2024 մարտ ապրիլ մայիս	տնօրենի մ/մ նախագահ	
7.	Կազմակերպել առարկայական օլիմպիադաների I փուլը 1.Մաթեմատիկա և ինֆորմատիկա 2.Ֆիզիկա, քիմիա,ՆԶՊ 4.Հ.լեզու և գրականություն 5.Հայ ժող. պատմություն 6.Ռուսաց լեզու և անգլերեն 7.Աշխարհագրություն և ՆԶՊ	նոյեմբեր - փետրվար	տնօրեն մ/մ նախ.-ր	
8.	ՈՒսումնասիրել տառաճանաչության ընթացքը I դաս., արդյունքները քննարկել մ/մ նիստերում:	ապրիլ	տնօրեն մ/մ նախ.	
9.	Կազմակերպել ուսուցիչների սեմինարներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և նոր գործիքակազմի դերը դասի արդյունավետության բարձրացման գործում:	հոկտեմբեր- նոյեմբեր	Ա.Մովսիսյան	

5-ՐԴ ԲԱԺԻՆ

Դաստիարակչական բաժին

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	Օգնել դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին, դասղեկներին, դասվարներին, գրադարանավարին կազմելու դաստիարակչական աշխատանքների պլանները:	օգոստոս 2023	տնօրեն	
2.	Նախապատրաստվել նոր՝ 2022-23 ուսումնական տարվա մեկնարկին:	օգոստոս 2023	տնօրեն	
3.	ՀՀ և ԼՂՀ անկախության 29-րդ տարեդարձերի կապակցությամբ դասարաններում անցկացնել զրույցներ, ցերեկույթներ և արիության դաս՝ նվիրված մայիսյանցի զոհված ազամարտիկների հիշատակին:	սեպտեմբեր 2023թ	տնօրենի դաստ. կազմ.	
4.	Դպրոցում նշել Ավ Իսահակյանի ծննդյան 148-ամյակը:	հոկտեմբեր	տնօրեն, մ/մ նախագահ	
5.	Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակի 32-րդ տարելիցի կապակցությամբ անցկացնել հիշատակի ցերեկույթ: Ամանորի տոնահանդեսների կազմակերպում:	դեկտեմբեր 07.12 2023թ	տնօրեն տ դաստ. կազմ., դասղեկներ	
6.	ՀՀ պետական խորհրդանիշներին նվիրված զրույցներ անցկացնել 1-12րդ դասարաններում:	տարվա ընթացքում	տնօր. տեղ., ԴԱԿ, դասղ.	
7.	Եղիշե Չարենցի 125-ամյա հոբելյանները նշել:	2023թ մարտ	Գր. ուսուց. պատմ. Ուս.	
10	«Հայ ծառատունկ» կազմակերպության հետ համատեղ շարունակել դպրոցի կանաչապատման աշխատանքները:	հոկտեմբեր-մայիս	տնօրենի տեխնոլ. ուս.	
11	5-12-րդ դասարանների մասնակցությամբ միջոցառումներ՝ նվիրված Մայրենիի տոնին և հայոց մեծերին:	փետրվար 2022թ	տնօրեն ԴԱԿ	
12	Ցերեկույթ՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակի 108-ամյակին:	ապրիլի 24	տնօրեն գրական. ուս.	
13	Հայրենական մեծ պատերազմում և 2-րդ աշխարհամարտում տարած հաղթանակի 76-րդ և Շուշիի ազատագրման 29-րդ տարեդարձների կապակցությամբ դպրոցում կազմակերպել շարային քայլքի և հայրենասիրական երգի փառատոն:	մայիսի 8	տնօրեն ՆԶՊ, ֆիզկ., տեխն. մ/մ	
14	Անցկացնել միջոցառումներ «Հրաժեշտ այբբենարա-նին» և «Հրաժեշտ նախակրթարանին» խորագրով:	մայիս	դասվար	

6-ՐԴ ԲԱԺԻՆ

Ներդպրոցական վերահսկողության համակարգ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	Հաստատել ծրագրային նյութերը, թեմատիկ պլանավորումները բոլոր ուսումնական առարկաներից:	սեպտեմբեր	տնօրեն	
2.	Շաբաթը մեկ անգամ ստուգել աշակերտների ուշացում-բացակայությունները և այն քննարկել դասարանական ժողովներում, տնօրենին կից խորհրդում, ծնողական խորհրդում, իսկ մանկավարժներինը՝ արհկոմի նիստերում:	տարվա ընթացքում	տնօրեն, դասղեկ,	
3.	Աշակերտների գիտելիքների համապատասխանությունը հանրակրթական չափորոշիչներին ստուգելու համար անցկացնել տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ հայոց լեզվից և մաթեմատիկայից, արդյունքները քննարկել մ/մ նիստում:	տարվա ընթացքում	Տնօրեն մ/մ	
4.	Հ.լեզու և գրականության մ/մ նիստում քննարկել գեղարվեստական և ծրագրային գրականության ընթերցանության ընթացքը, ինչպես նաև աշակերտների կապը դպրոցի գրադարանի հետ:	մարտ	տնօրեն, մ/մ նախագահ	
5.	Ստուգել դասամատյանների /էլեկտրոնային/, օրագրերի և աշխատանքային տետրերի ուղղությամբ տարվող աշխատանքները և քննարկել առարկայական և դասղեկական մ/մ նիստերում:	դեկտեմբեր	տնօրեն, մ/մ նախագահ	
6.	Ստուգել և մ/մ նիստում քննարկել թեմատիկ գրավոր աշխատանքների վիճակը հայոց լեզվից, մաթեմատիկայից, ռուսաց և օտար լեզուներից:	հունվար	տնօրեն, մ/մ նախագահ	

7-ՐԴ ԲԱԺԻՆ

Աշխատանք ծնողական կոլեկտիվի հետ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	Հրավիրել դպրոցի ընդհանուր ծնողական ժողով. Լսել դպրոցի ծնողական խորհրդի նախագահի հաշվետվությունը 2022-23 ուստարում դպրոցի ծնողական խորհրդի կատարած աշխատանք-ների մասին և 2023-24 ուսումնական տարվա խնդիրները; Հրավիրել ծնողական ժողով, ընտրել դասարա-նական ծնողական խորհուրդներ և դպրոցի ծնողական խորհուրդ: Ծնողական ժողովում լսել 2023-24 ուստարում դպրոցի ծնողական կոլեկտիվի առջև կանգնած խնդիրները:	սեպտեմբեր	տնօրեն, ծնողական խորհրդի նախագահ	
2.	Հրավիրել ծնողական ժողով, ա.Լսել դպրոցի տնօրենի հաշվետվությունը 2023 ֆինանսական տարում դպրոցի ֆինանսական ծախսերի և 2024թ բյուջեի մասին: բ.Ամփոփել առաջին կիսամյակի ուսման առաջադիմության արդյունքները:	հունվար 2024	տնօրեն	
3.	Հրավիրել ծնողական ժողով, լսել. ա.Զեկույց. «Կրտսեր դպրոցականի ռեժիմի ճիշտ կազմակերպումը» (զեկ՝ Լ. Վարդանյան): բ.«Ե՞րբ է երեխան դառնում դժվար դաստիարակվող» (զեկ.՝ Թ. Սարգսյան):	մարտ	տնօրեն դասվար	
4.	ա.Բարձր դասարանի աշակերտի նախապատ-րաստումը զինվորական ծառայությանը և կյանքին: Մ. Մուշեղյան բ.Ծնողի դերը աշակերտների քննությունների նախապատրաստման գործում: (զեկ՝ Թ. Սարգսյան)	մայիս	տնօրեն, զինղեկ	

8-ՐԴ ԲԱԺԻՆ

Ֆինանսական և տնտեսական գործունեություն, ուսումնական բազայի ամրապնդում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1.	Դպրոցն ապահովել սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման համար անհրաժեշտ բոլոր միջոցներով:	2023թ. սեպտեմբեր		
2.	Կազմել 2023-24 ուստարվա տարիֆիկացիան:	օգոստոս-սեպտեմբեր	հաշվապահ, տնօրեն	
3.	Կազմել 2023թ. ֆինանսական տարվա ծախսերի նախահաշիվը և բյուջետային հատկացումները:	նոյեմբեր-դեկտեմբեր	հաշվապահ, տնօրեն	
4.	Համակարգչային կենտրոնը հարստացնել նոր համակարգիչներով:	տարվա ընթացքում	տնօրեն	
5.	Նախապատրաստել ձմեռային ջեռուցման աշխատանքները: Ուշադրության կենտրոնում պահել հակահրդեհային միջոցները:	նոյեմբեր-դեկտեմբեր	տնտեսվար	
6.	ՈՒշադրության կենտրոնում պահել սովորողների կյանքի անվտանգության և սանիտարական վիճակը:	տարվա ընթացքում	տնտեսվար	

9-ՐԴ ԲԱԺԻՆ

Կազմակերպչական, մանկավարժական միջոցառումներ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշ. կատ. մասին
1	Կատարել աշխատանքի բաժանում դպրոցի ադմինիստրացիայի միջև:	սեպտեմբեր	տնօրեն	
2	Կատարել 2023-24 ուստարվա դասարանների կոմպլեկտավորում և հաշվետվություն ներկայացնել մարզպետարանի կրթության և ֆինանսական վարչություններին:	սեպտեմբեր	տնօրեն	
3	Սահմանել աշխատանքային ռեժիմ՝ ուսուցչական ու աշակերտական հերթապահություն:	սեպտեմբեր	տնօրեն	
4	Կարգավորել ուսուցչական և աշակերտական գործերը:	սեպտեմբեր	տնօրեն	
6	Ամիսը երկու անգամ անցկացնել տնօրենին կից խորհրդի նիստ:	տարվա ընթացքում	տնօրեն	

: